ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 1808

23 մարտ 2026թ.

«ՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Գ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Մասիսի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Նորոգում» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 26.12.2025թ. կնքվել է ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/2 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում Կատարողը պարտավորվել է մատուցելու Մասիս համայնքում թափառող կենդանիների վնասազերծման ծառայություններ: Ընդ որում, Պայմանագիրն ուժի մեջ է մտել 26.01.2026թ. N 1 համաձայնագրի կնքմամբ:

05.02.2026թ. Պատվիրատուին է ներկայացվել պայմանագրի կամ դրա մի մասի արդյունքների հանձնման-ընդունման N 01 արձանագրություն, որից ենթադրաբար բխել է, որ փաստացի մատուցվել է ընդհանուր թվով 53 հատ շների ստերիլիզացման/ամլացման ծառայություններ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուին չեն ներկայացվել Պայմանագրի թիվ N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված պայմանների և չափորոշիչների վերաբերյալ տեղեկություններ, ուստի տրվել է բացասական եզրակացություն և Պատվիրատուն 23.02.2026թ. N 1030 գրությամբ դիմել է Կատարողին՝ առաջարկելով ներկայացնել գրավոր ապացույցներ, որին ի պատասխան 04.03.2026թ. ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Միեր Շահնազարյանից ստացվել է հ.1856683 դիմումն ուղղված ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Նորայր Հակոբյանին, որով ներկայացվել են որոշակի փաստաթղթեր:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ներկայացված փաստաթղթերը թերի են և չեն հիմնավորում ծառայությունների պատշաճ մատուցման փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով Մասիսի համայնքապետարանի և «Նորոգում» ՍՊԸ-ի միջև 26.12.2025թ. կնքված ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/2 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի ա) պարբերությունը՝ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատու կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Միաժամանակ առաջարկում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 3 (երեք) բանկային օրվա ընթացքում Ձեր ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման ապահովումը՝ **1 950 000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամի չափով և պայմանագրի ապահովումը՝ **1 300 000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար)** ՀՀ դրամի չափով, վճարել Պատվիրատուի՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900 435 002 101 հաշվի համարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է բնօրինակով ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին, 3-րդ հարկ, 316 սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ**

Կատ. Գնումների բաժնի
պետ՝ Ք. Խաչատրյան